ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր Ի Ց։

Նիստ Դ. Փետր. 15—16 1893 թ.

Ուսումնարանական Յանձնաժողովս իր ներկայ Դ. նիստում լսեց Գանձակի Ս. Յովհաննէս մայր եկեղեցու տղայոց և օրիորդայ դպրոցների հոգաբարձութեան բողոքը յանուն Ամենապատիւ Տէր Տեղակալի, ընդդէմ թեմական վերատեսուչ Հայր Գեղամեանի, դպրոցների աւագ ուսուցիչների և նոյն եկեղեցու երեցփոխան Նաբաթեանի և այդ գործի մասին եղած քննութիւնը որ կատարել է Գանձակի փոխանորդ Արժ. Պօղոս վարդապետը։

Ա. Բողոք թեմական վերատեսչի դէմ. որ նա «միշտ ընդհակառակ կարգադրութիւններ է անում։ Բացառապէս մեր խնամքին յանձնուած դպրոցների համար, միջամտելով մինչև անգամ ջլատելու հոգաբարձութեան իրաւունքները», ինչպէս՝ 1. դպրոցի համար նախկին տունը — հոգաբարձութեան նախագահ Թումանեան Գրիգոր աւագ քահանայի, անյարմար է համարում և վարձում մի ուրիշ տուն տարեկան 800 ր. վարձով, մինչդեռ նախկին տանը տալիս էր 450 ր. «Թէ որքա՜ն անյարմար է դպրոց լինելու համար նոր վարձած — Մելիքեանի նեղ, մութը, խոնաւ և խարխուլ սենեակներով տունը, դա ապացուցեց երեցփոխ Նաբաթեանը, որ զեկուցանում է հոգաբարձութեանը թէ կամ առաջարկել պ. Մելիքեանին, նորոգութիւններ անի, կամ վարձել մի նոր տուն «բայց սա ի՞նչ կարող էր անել քանի, որ տուն վարձողը թեմական վերատեսուչն է եղել, և ահա այդպիսով դպրոցը իւր սուղ միջոցներից տուժում է տարեկան 350 ռուբլի շնորհիւ հայր Գեղամեանցի»։

2. Հոգաբարձութիւնը ուսուցիչ Բագրատ Սուքեասեանի գործունէութիւնից չի գտնում ոչ մի արդիւնք, ուստի և խնդրում է իւր նախագահի միջոցաւ թեմական վերատեսչին, որ նրան արձակի և նրա տեղ նշանակի Պօղոս Յովհաննէսեանին կամ մի այլ հմուտ անձի, սակայն նա չի ականջ անում. և նոյն իսկ ուս. Սուքեասեանի արած «անհամեստ ցոյցերի» մասին հոգաբարձութեան տուած բողոքից յետոյ հայր վերատեսուչը չէ անում նրան և ոչ մի նկատողութիւն։

3. Աւագ ուսուցիչ Սահակեանի հոգաբարձութեան հասցրած վիրաւորանքի համար՝ հոգաբարձութիւնը բողոքում է հայր վերատեսչին, որ «բարեհաճեց տուգանքի ենթարկել Սահակեանին 25 ռուբլու և մի քանի օրից յետոյ էլ ներեց նորա յանցանքը և տուգանքը՝ ի նախատինս հոգաբարձութեան»։

4. «Ուսուցիչներից մին չանսալով Գեղամեանցին՝ անաչնիւ վարուեց հոգաբարձութեան հետ, պատժուեց զրկուելով պաշտօնից վեսը» 10-ին. և ի զուր միջնորդեց հոգաբարձութիւնը Գեղամեանցին, բայց նա հոգաբարձութեան ո՞ր խնդիրն է կատարել, որ կատարէր և այս խնդիրը»։

5. Որ նա «անհնազանդ և իրանց պաշտօնին անհաւատարիմ մարդկանց ցանկանում է հաստատել կրկին իրանց պաշտօնի մէջ» և հոգաբարձութիւնը չը գիտէ «ինչով բացատրել հայր վերատեսչի արդարադատութիւնը, նա հէնց դիտմամբ է կարծես անում այն կարգադրութիւնը, որին գիտէ, որ հոգաբարձութիւնը անհամաձայն է։ Նա ցանկանում՝ որ ինչպէս անցեալ տարի այդ ըմբոստ ուսուցիչները . . . »։

6. «Ցնտեսական մասի վերաբերեալ, գրում է առանձին նամակ Նարաթեանցին, որ չտայ հոգաբարձութեանս դպրոցների նախահաշուի գումարից ուսուցիչների ռոճիկների համար»

7. Թեմական վերատեսչի ռոճկի համար Գանձակի դպրոցներից 300 ր. վճռ բուելու մասին ըստ կարգադրութեան Գեր. առաջնորդի, հոգաբարձութիւնը մի տարի վճարում է, իսկ հետևեալ տարուայ համար դիմում է առաջնորդին և խնդրում պակասեցնել այդ վճարը, որը առաջնորդի մահուան պատճառով մնում է անհե-

տեւանք։ Բայց թեմական վերատեսուչը «հաճելով Նաբաթեանի կամքը կարգադրումէ դպրոցներում թոշակները սահմանելու մասին, արձակումէ տղայոց և օրիորդաց դպրոցների աշակերտները և աշակերտուհիք, ասելով թէ՝ «ով իւր թոշակը չի բերիլ, արտաքսուած է» և այդպիսով ժողովումէ թոշակները, և այդ գումարից վճարումէ բոլոր ուսուցչաց ռոճիկները սեպտեմբեր ամսոյ ··· վեր առնում 300 ռուբլի» իրեն ռոճկի և ճանապարհածախքի համար։

8· Բողոքումէ որ թէ աւագներին և թէ ուսուցիչներին ինքն է նշանակում մինչդեռ, միւս ուսուցիչների ընտրութիւնը հոգաբարձութեան և աւագի խորհրդակցութեամբ է լինելու։

Բ· Բողոք աւագ ուսուցիչների և ուսուցիչների դեմ։ Հոգաբարձութիւնը բողոքում։ 1· ուսուցիչ «Բագրատ Սուքիասեանը, ոչ թէ միայն իւր աշխատը չգիտէ, այլ և իւր առարկայի մէջ չէ ցոյց տուել ոչ մի արդիւնք» և խնդրում թեմական վերատեսչից արձակել նրան և նրա տեղը նշանակել Գանձակեցի Պօղոս Օհանջանեանին և կամ մի այլ ոքի։

2· Օրիորդաց դպրոցի աւագ ուսուցիչ Միքայէլ Սահակեանցի դէմ, որ նա Ս· Լուսաւորիչ եկեղեցու մի դասեան օրիորդաց դպրոցի դասընթացը աւարտողներին նստացնումէ ոչ չորրորդ այլ գ· բաժանմունքը։ Որի մասին ըստ ծնողաց բողոքի, հոգաբարձութիւնը Սահակեանից բացատրութիւն է պահանջում, իսկ նա «յանկարծ սկսումէ գռեհիկ ոճով» խօսել և ասել «ձեր ի՞նչ գործն է իմ գործի մէջ խառնուելու ···»։

3· Որ թէ տղայոց և թէ օրիորդաց դպրոցի աշակերտներին ու աշակերտուհիներին «երբէք չեն բերում եկեղեցի, ոչ մի ժամանակ»· չեն բերում նաև այն ժամանակ, երբ «հոգաբարձութիւնը հարկից ստիպուած, որ նշանաւոր մարդիկ մեռնումեն և կտակումեն գումար, թէ Ս· Էջմիածնին, ճեմարանին և թէ դպրոցներին», ըստ խնդրանաց ննջեցեալների ազգակիցների խընդրումէ երկու աւագ ուսուցիչներին բերել եկեղեցի երգեցող աշակերտներին· և դեռ «երկուքը միասին մի սպառնալից նամակ են գրում հոգաբարձութեան»։

4· Որ Աւագ ուսուցիչներ — Միքայէլ Սահակեանը և Արշալոյս Միխիթարեանը, անբարեխիղճ մարդիկ են իրենց պաշտօնում, որի մասին գրելով թեմական տեսչին խնդրում են փոխել նրանց երկու բարեխիղճ անձնաւորութիւններով, իսկ նա «կարծես թէ՝ յիշեալ արձանագրութեան մէջ ինքը չէ կարդացել, կամ թէ կանխապէս ինքը գիտակ չէ նրանց ապարդիւն գործունէութեան հետ և չէ նկատել նրանց խռովարար հոգին և ոչ էլ լսել հասարակաց ազգ կարծիքները և տխուր տպաւորութիւնները», ու նրանց փոխելու յարգելի պատճառ չի գտնում։ Որ նոքա — աւագ ուսուցիչները հոգաբարձութիւն ճանաչում են այն ժամանակ, երբ հարկաւոր է ռոճիկ ստանալ «և խօսք մի տրած կառավարում են դպրոցները ինչպէս որ իրանց կամքն է բարեհաճում դպրոցի մէջ կարգ, կանոն չկայ, երբ կամենում են սկսում են դասերը, և երբ կամենում արձակում. ժամը 12-ից յետոյ դպրոցում ոչ ոք չկայ, ուսնական արձակուրդներին ով ուզում է բացակայում է, մինչև անգամ ամսով և նրանց բաց թողած դասերին համար չկայ և որ հոգաբարձուն կարող է նրանց նկատել չէ որ նոքա հոգաբարձու չեն ճանաչում»։

6· Նախկին ուսուցչական խումբերը ներկայացումներ տուել են յօգուտ դպրոցների, իսկ ներկայ խումբը թէև դարձեալ տալիս է ներկայացումներ սակայն «ամսով դասերից զրկւում . . . դպրոցի ձեռագործ նիւթերը գործադրում թատրոնական զգեստների վրայ և . . . յօգուտ իրանց գրպանների» և հոգաբարձութիւնը չի կարողանում բողոքել թեմական վերատեսչին դրա դէմ, որովհետև «ձայն բարբառոյ յանապատի է համարւում»։

7· Աւագ ուսուցիչները հակառակ կանոնադրութեան սկսում են քննութիւնները առանց հոգաբարձութեան գիտութեան։ Վերջինս գրում է նրանց որ հաղորդեն թէ ով ո՞րքան դաս է բաց թողել որ դասերի գինը «ըստ այնմ զեղջէ նրանց ռոճկից» բայց այդ խնդիրը մնում է անկատար։

Գ· Խոլոր ընդդէմ երեցփոխ Նաբաթեանի։ Հոգաբարձութիւնը բողոքում է Նաբաթեանի դէմ 1 որ նա տեսնելով ներկայ հո-

գաբարձութեան եռանդուն գործունէութիւնը, նախանձում է, ուստի միայած թեմական տեսչի հետ խոչնդոտներ է յարուցանում ընդդէմ իր գործունէութեան, և բոլոր ընդհարումները որ տեղի են ունեցել հոգաբարձութեան և թեմական տեսչի ու աւագ ուսուցիչների մէջ համարում է մեքենայութիւն հոգաբարձութեան գանձապահ Նաբաթեանցի։ Նրա արած մի մեքենայութիւնն էլ այն է, որ խնդրում է հոգաբարձութիւնից որ իրենցից մէկին ժամանակաւոր գանձապահ նշանակեն, որովհետև ինքը բաց է գնում։ բայց չնայելով որ այդ պաշտօնի համար նշանակւում է հոգաբարձութեան անձնափոխանորդ Յակոբ Տէր Յարութիւնեանը, սակայն «թէ նա ի՞նչ եղանակով է փող ստանում Նաբաթեանից . . . դա կատարեալ նահատակութիւն է նրա կողմից»։ Եւ երբ ամառուայ արձակուրդներին ուսուցիչներին ռոճիկ պիտի տրուէր, նա ճարահատեալ դիմում է Նաբաթեանի եղբօրը, որը պատասխանում է թէ «թեմական տեսուչը գրել է իրանց դպրոցական գումարից չտալ հոգաբարձութեանը, այլ ինքներս տանք ուսուցիչներին ռոճիկներ»։ որի մասին գրում է հոգաբարձութիւն թեմի վերատեսչին, սակայն նա լռութեամբ է պատասխանում։ և որ զզուեցրել է երկու հոգաբարձուի՝ ու նրանք հրաժարուել են Տէր Ներսիսեան և Համատիւռեան։

2։ Որ Նաբաթեան երեցփոխը գաղում է նուիրատուներից նուիրուած զանազան ժամանակներում 3000 ր։ և երբ հոգաբարձութիւնը առանձին №№ 22 և 35 գրութիւններով խնդրում է նրանից տեղեկութիւն տալ յիշեալ գումարի մասին, ո՞ւմ մօտ է, ինչքա՞ն տոկոս է բերում, որ արձանագրուի հոգաբարձական գործոց մէջ։ բայց երեցփոխ Նաբաթեանը չի պատասխանում ու զայրանում է, որպէս զի հաշիւ չտայ, գուցէ և այդ դիտմամբ էլ չէ մասնակցում հոգաբարձութեան գործերին»։

Վերջ բոլորիս հոգաբարձութիւնը խնդրում է ամենապատիւ Տէր Տեղակալից անել կարգադրութիւն որ այլ ևս նոյն աւագ ուսուցիչները չնշանակուին, այլ նրանց տեղը երկու ուրիշ հաւատարիմ աւագ ուսուցիչներ, որոց հետ ինքը կարողանայ կազ-

մել կանոնաւոր խումբ դպրոցների անսայթաք յառաջադիմելու համար։

Ցանձնաժողովս ի նկատի ունենալով Գանձակի փոխանորդի քննութիւնը և թեմական վերատեսչի նրան ուղղած № 234 հաղորդագրութիւնը, քննեց այդ և գտաւ հետևեալը.

1. Տուն ընդունելը. Հոգաբարձութիւնը իր Ամենապատիւ Տէր Տեղակալին տուած խնդրում, բողոքում է Մելիքեան տան մասին իբր անյարմար և վատ շինութիւն ինչպէս վերը գրեցինք, մինչդեռ նախկին—Թումանեան Գրիգոր քահանայի տունը շատ անգամ աւելի անյարմարութիւններ ունի քան թէ նոր վարձած տունը, ահա այդ. ա. Միևնոյն նեղ, փոքր և դեռ ուրիշ անյարմարութիւններ ունեցող գաւթում բնակւում է նաև Տէր Հօր ընտանիքը, հարևան գաւթում մի քանի ընտանիք, բացի դրանից միևնոյն դպրոցական գաւթում ընտանի կենդանիների երթևեկութիւնը. այդ բոլորի վրայ աւելացրած խոհանոցների ծուխը, գոմանոցների բուրմունքը և այլն։ բ. Տէր Հօր տունը գետնայարկ է, խոնաւ, նեղ, մթնոտ սենեակներով։ գ. Շատ հեռու է եկեղեցու գաւթում գտնուած տղայոց դպրոցից։ Սակայն հակառակ բողոքագրի՝ իր առ փոխանորդն ուղղած գրութեան 30 հոկտ. 1892 թ. № 50-ի մէջ ասում է «Հոգաբարձութիւնս այդ տան մասին չունի ոչինչ տրտունջ կամ պահանջմունք տանուտէր Պ. Մելիքեանցից. իսկ այդ մասին իւր ակնարկութիւնը Ամենապատիւ Տէր Տեղակալին, պատճառը նա է, որ ցոյց տայ թեմական տեսչին Գեղամեանցի ինքնակամ խառնուիլը հոգաբարձական իրաւունքներին, այն է՝ տնտեսական մասին»։ Իւր նախորդ գրութեան մէջ ասում է, որ Մելիքեանի տանը վճարում է 350 ր. աւելի քան նախկին—հոգաբարձութեան նախագահ Գրիգոր քահանայ Թումանեանցի տանը։ Մինչդեռ նոյն հոգաբարձութեան Գանձակի բարեշնորհ փոխանորդի տուած բացատրութիւնների մէջ խոստովանում է, որ յիշեալ բնակարանի աւերուած մնացած սենեակները տրուում են քրեհով ուսուցիչներին և այլն. ու այդ 350 ր. բացը ծածկւում է մասամբ այդ եկամուտով։ Առաջին տարին ըստ հոգաբարձութեան ասութեան բե-

բել է տունը վարձ երկու հարիւր տասն և հինգ բուբլի 50 կ· որի հակառակ թեմական վերատեսչի ներկայացրած փաստերից երևում է որ առաջին տարին բերել է վարձ 370 ր· (120 ր· աւագ ուսուցիչ Պ· Պանճուլաղեանից· 150 ուս· Գրիգոր Խալաթեանից· 100 ր· միւս ամուրի ուսուցիչներից)· ասել է դեռ 20 բուբլի էլ զուտ արդիւնք է մնում դպրոցին առաջին տարում, ուր մնաց թէ 350 ր· վնաս։ Երկրորդ տարին աւելի պակաս վարձ է բերել· սակայն եթէ միշտ էլ 450 ր· աւելի թանգ նստի այդ տան վարձը համեմատած Հ· Թումանեանցի տան հետ, դա չի նշանակում թէ դպրոցը նիւթապէս վնասւում է· եթէ Հ· Թումանեանցի դպրոցի համար անյարմար շինութեանը տրւում էր 450 ր· ինչպէս պահանջել, որ մի ուրիշ շինութիւն, որ նրանից առաւելութիւններ ու յարմարութիւն ունի իբրև դպրոցի համար շինութիւն գտնէալ նոյնքան վարձով տրուի։ Ահա Մելիքեանի տան յարմարութիւններն ու առաւելութիւնները· 1· ընդարձակ պարսպապատ դաւիթ ունի· 2· գետնայարկ չէ· 3· յարմար սենեակներ ունի· 4· շատ աւելի մօտ է տղայոց դպրոցին, որ հնարաւորութիւն է տալիս օրիորդաց դպրոցում դաս ունեցող ուսուցչին առանց դա-ից յետ մնալու կարճ ժամանակում հասնել տղայոց դպրոց, և այլն։

Հոգաբարձութիւնը բողոքում է, որ դպրոցի համար Մելիքեանի տունը թեմական վերատեսուչն ինքնակամ է վարձել, մինչդեռ Հայր Գեղամեանի տուած բայադրութիւնից Գանձակի փոխանորդ բարեշնորհ Պօղոս վարդապետին և հոգաբարձութեան ներկայացրած տան պայմանագրի պատճէնից երևում է, որ Մելիքեանի հետ պայմանագրին ստորագրել են բացի նախագահ Գրիգոր քահանայ Թումանեանից միւս բոլոր հոգաբարձուները· և այդ էլ հասկանալի է, նա չէր կարող հաշտ աչքով նայել այդ բանի վրայ, չնայելով որ ինքը մի ուրիշ գրութեամբ առ փոխանորդն, ասում է թէ ինքը հակառակ չէ եղել նոր տուն վարձելուն· սակայն հենց այդ — պայմանագրին չստորագրելը — ապացուցանում է որ ինքն է պատճառ դրա դէմ եղած դժգոհութիւններին։

2· Խնդիր յարուցանելով ձայնագրութեան ուս· Բագրատ Սուքիասեանի մասին՝ շուշափելի պատճառ չի կարողանում ներկայացնել և միևնոյն ժամանակ նեղանում է՝ որ ուսումնարանական մասի անմիջական հսկող վարչութիւնը առանց հիմնաւոր պատճառի չի արձակում նրան։ Բայց այստեղ խնդիրը Սուքիասեանի ընդունակութիւնը կամ անընդունակութիւնը չէ՝ այլ մի ուրիշ՝ որ գանձակեցի Պօղոս Օհանջանեանցը նախագահին Թումանեանի ջանքերով ուզում է նորա տեղը բռնել՝ ուրեմն այստեղ աւելի տեղը Օհանեանցին տալու մտադրութիւն կայ քան ուսուցչի անընդունակութիւն։

3· Թեմական վերատեսուչ հայր Գեղամեանը Սահակեան աւագ ուսուցչի հոգաբարձութեան հասցրած վիրաւորանքի համար ենթարկում է 25 ր· տուգանքի իր հոգաբարձութեան ուղղած 91 թ· № 828·գրութեամբ և ապա Գանձակ գալով քննում է գործը և գտնում՝ որ բուն խնդրում—որ աւագ ուսուցիչը միգասեան դըպրոցի դասընթաց աւարտողներին ընդունում է ոչ չորրորդ այլ երրորդ բաժանմունք—հոգաբարձութեան բողոքը հիմք չունի՝ ուստի և իր № 895 գրութեամբ առաջարկում է հոգաբարձութիւնը 25 ր· տուգանքը ետ չդնէ յիշեալ աւագ ուսուցչի ռոճկից· որի հետ խնդրում է հոգաբարձութիւնից «ամենայն ճշգութեամբ պահպանել եկեղեցական ծիսակ· ուսումնարանների կանոնադրութեան այն յօդուածները (23—41) յաղագս պարտուց և իրաւանց հոգաբարձուաց»—ու զուտ մանկավարժական խնդիրներում աւագների հետ պաշտօնական յարաբերութեան մէջ չմտնել՝ այլ իրենց դիտողութիւնները ուղղել իրեն—թեմական վերատեսչին։

Նոր աշակերտի ընդունելութեան ժամանակ աւագ ուսուցիչները անշուշտ մանկավարժական ժողովի համաձայնութեամբ պիտի այս կամ այն բաժին նստացնեն նոր աշակերտին ըստ նորա պատրաստութեան· ուստի և անպայման պարտաւորեցուցիչ չէ ընդունել մի ուրիշ դպրոցից եկած աշակերտին կամ աշակերտուհուն հետևեալ բաժինը՝ եթէ փորձով տեսնում են—ուսուցիչները—նրա անպատրաստ լինելը։ Որովհետև Գանձակում պատահած դէպ-

քում քննութիւնից չի երևում թէ Սահակեանը ինքնակամ է արել աշակերտուհիների ընդունելութիւնը թէ ոչ, ուստի այդ խնդրի մասին Յանձնաժողովս որոշումը թողնում է Սահակեանից բացատրութիւն պահանջելուց յետոյ։

4· Ուսուցիչ Քամալեանին արձակելիս թեմական տեսուչը ինչպէս գրում է իր № 234 գրութեան մէջ, ունեցել է յարգելի պատճառներ։

5· Հոգաբարձութեան բողոքի ընդդէմ թեմական վերատեսչի, ամենանշանաւոր կէտն այն է, որ նա կարգադրում է անտեսական մասին վերաբերեալ խնդիրներ այն է, տուն վարձել, ինչպէս յիշուեցաւ· և հոգաբարձութեանը արգելք դնելը, որ վերջինս իրագործի իր մտադրութիւնը՝ ուսուցիչներից ոմանց ամառուայ ռոճիը կտրել կամ բաց թողած դասերի գինը զեղջել և այլն։ Քննական գործից Յանձնաժողովս նկատում է, որ ինքը հոգաբարձութիւնն է տեղիք տուել թեմական վերատեսչին արտաքոյ կարգի միջոցների ձեռք առնելուն։ Նա երբ տեսնում է, որ հոգաբարձութիւնը, չէ կամենում իւր նախագահի—Թումանեան Գրիգոր քահանայի միանգամայն ուսումնարանի համար անյարմար և անպէտք տանից հեռացնել գայրոցը· ինքը ստիպուած է լինում և ստիպել և մասնակցել նոր տուն վարձելու խնդրում։ Երբ նկատում է, որ հոգաբարձութիւնը կամենում է զրկել ուսուցիչներից ոմանց (օր· Խաժակնեանցին) ամառուայ ռոճկից կամ ոմանց ռոճիկներից զեղջել բաց թողած դասերի համար — որպիսի որոշումներ կարող են կատարումն առնել միմիայն ձեռընհաս իշխանութեան նախընթաց հաստատութեամբ—կարգադրում է, որ գանձապահը ինքը բաժանէ ուսուցիչների ռոճիկը· պարզ տեսնելով — վերատեսուչը — հոգաբարձութեան ձգտումը ինքնակամ որոշումները գործադրելու, որը երևում է հոգաբարձութեան գրութիւններից թեմական վերատեսչին և աւագ ուսուցիչներին։

6· Նոյն հոգաբարձութիւնը զարմանում է, որ թեմական վերատեսուչը իր իրաւունքը գործադրում է։ Նա ոչ մի կերպ անբարեխիղճ չի գտնում աւագ ուսուցիչներ—Սահակեանին և Մխիթարեանին· որովհետև հոգաբարձութեան բողոքների մէջ նոցա

արձակելու չափ շոշափելի պատճառներ չի ներկայացնում, ուստի և թեմական վերատեսուչը չի համաձայնում առանց պատճառի նրանց արձակել։

7. Հոգաբարձութեան նախագահ Գրիգոր քահանան աւագ ուսուցիչներին անուանում է «ըմբոստ և անբարեխիղճ»։ քննական գործերից երևում է, թէ նոքա ըմբոստ և անբարեխիղճ անուանուում են այն պատճառով, որ ընդդիմացել են նրան, երբ նա—նախագահը, թոյլ է տուել իրան առանց մանկավարժական խորհրդի գիտութեան, ինքնագլուխ, ա. ընդունել արձակուած աշակերտին. բ. դասարան մնացած աշակերտին կամ աշակերտուհուն ինքնակամ փոխադրել, բարձր դասարան նստացնել. գ. միդասեան դպրոցից բերել երկդասեան։ Ինչպէս նա իր աղջկան միդասեան օրիորդաց դպրոցից փոխադրում է երկդասեան դպրոց. և իր չորրորդ բաժանմունքում մնացած որդուն ինքնագլուխ տանում հինգերորդ բաժանմունք և այլն. (թեմ. վերատեսուչ № 234 գրութիւն. առ բարեշնորհ փոխանորդն Գանձակի, որոց մասին բարեշնորհ հօր վկայութիւն է բերում.)։

8. Թեմական վերատեսուչ հայր Գեղամեանը մեղադրում է հոգաբարձութիւնից, որ նա ինքնակամ հաւաքել է աշակերտների թոշակագրամները, բաժանել ուսուցիչների ռոճիկները և 300 ր. էլ վերցրել է իրեն ռոճիկ և ճանապարհածախք։

9. Հոգաբարձութիւնը իր անցած Յունիսի 16 ի նիստում։ բացակայութեամբ գանձապահ, հոգաբարձու Նաբաթեանի, ղրաղում է եկող ուսումն. տարուայ խմբի կազմակերպութեան խնդրով։ Որոշում է այդ նիստի արձանագրութեան պատճէնը ուղարկել թեմական վերատեսչին—ուր նկարագրուած է աւագ ուսուցիչների գործունէութիւնը—և խնդրել, որ նա արձակի իրենց «ինամից յանձնուած դպրոցների ուսուցչական խումբը ևս և աւագ ուսուցիչներ Արշալոյս Մխիթարեանին և Միքայէլ Սահակեանին, նշանակելով նրանց տեղը նոր աւագ ուսուցիչներ, որոց հետ հոգաբարձութիւնը շուտափոյթ կազմակերպէ նոր ուսուցչական խումբ....» հակառակ դէպքում սպառնում է «մերկացումներ անել... թեմական տեսչի գործունէութիւնից»։ Եւ երբ

նա—թեմական վերատեսուչը չի կատարում հոգաբարձութեան այդ խնդիրը, նա իր բողոքի մի կէտն էլ գարձնում է այդ։ Ինչպէս արդէն ասուեցաւ աւագ ուսուցիչների արձակելու համար քնութիւնից չի երևում մի այնպիսի շոշափելի պատճառ որ թեմական տեսուչը նոցա այդ խնդիրը յարգէր։ Միայն, հոգաբարձութեան բողոքը իրաւացի է, երբ կանոնադրութեան համաձայն թեմական վերատեսուչը չի թողնում խմբի կազմակերպութիւնը և հոգաբարձութեան և աւագների հայեցողութեանը, այլ ինքն է կարգադրում այդ մասին։

10· Հոգաբարձութեան նախագահը մասնաւորապէս բողոքում է, որ աւագ ուսուցիչների իրեն և հոգաբարձութեան հասցրած վիրաւորանքը մնում է անպատիժ· մինչդեռ քննական գործից երևում է, որ նրանք թեմական վերատեսչի ներկայութեամբ հոգաբարձական ժողովում ներողութիւն են խնդրում հոգաբարձութիւնից և ի մասնաւորի հայր Թումանեանից և նրա աչքը համբուրելով ներումն են ստանում· բայց չնայելով սրան նորից բողոքում է։

11· Հոգաբարձութիւնը մեղադրում է աւագ ուսուցիչներին, որ աշակերտներին իբր թէ «ամենևին ոչ մի ժամանակ եկեղեցի չեն տանում» բարեշնորհ փրխանորդի քննութիւնից երևում է «թէ մերթ ընդ մերթ աշակերտելք և ուսուցիչք յաճախեալ են եկեղեցի և յաճախումեն»· մեղադրում են նաև բարեգործական նպատակաւ կատարող ներկայացումների յիշատակը պատուելու համար էլ եկեղեցի չը տանելում։

Ինչպէս գործերից երևում է հայր Թումանեանը իր լաւ ծուխերի յիշատակը պատուելու համար սովորութիւն ունի աշակերտներին եկեղեցի բերել տալ, և առ հասարակ այն ժամանակ երբ շահ կայ։ Նա երբեմն բողոքել է (թեմ· վերատեսուչ· հոկտ· 8-ի 1892 թ· 231 գրութիւն առ փոխանորդ Գանձակի· գ· կէտ·) որ մեծ տոներին աւելորդ է աշակերտներին եկեղեցի բերել, որովհետև եկեղեցին փոքր լինելու պատճառաւ տեղի մեծ մասը աշակերտներ են բռնում իսկ ժողովրդին տեղ չէ մնում։ Թեմական վերատեսուչը այդ խնդրում նրա կամայականութիւն-

ներին վերջ տալու համար իր 1891 թ. սեպ. № 480 շրջաբերականով հրանգներ է տալիս Գանձակի աւագ ուսուցիչներին աշակերտներին եկեղեցի տանելու համար, թէ սովորական և թէ նուիրատու ննջեցեալ պատահած դիպուածում։ Այս բանը դուր չգալով նրան, սկսել է ստիպողական միջոցների դիմել, իր ցանկացած ժամանակը աշակերտներին եկեղեցի բերելու, սակայն այդ էլ չյաջողելով, վերոյիշեալ խօսքերով բողոքում է Ամենապատիւ Տէր Տեղակալին։ Աւագ ուսուցիչները առաջնորդուած այն շրջաբերականով, ցեխ և անձրևային տօն օրերը եկեղեցի չեն տարել աշակերտներին, ուստի և նախագահի և հոգաբարձութեան բողոքի այդ կէտը հակառակ է իրողութեան և ամենևին պատուաբեր չէ հոգաբարձութեանը։

12. Հոգաբարձութիւնը բողոքում է, որ դպրոցում կարգ չկայ, ուսուցիչները երբ ուզում այն ժամանակ են յաճախում դպրոց և թէ ժամը 12-ից յետոյ դպրոցում ոչ ոք չի լինում։ Նա երևի մոռացել է, որ մեր դպրոցներում կան ժապաւինեալ օրագրական մատեաններ ուր բաց թողած դասերի քանակութիւնը և բացակայ պաշտօնէից անունները արձանագրում են կիսամեայ և միամեայ տեղեկագրեր և մանկավարժական ժողովի արձանագրութիւններ։ Թեմական վերատեսչի միայն տղայոց դպրոցի օրագրական մատեանից քաղած հաշուից երևում է, որ հետևեալ անձինք բացակայել են դպրոցից. 1. Յովհաննէս Խաչումեան 2 ժամ յարգելի և 10 ժ. 35 ր. անյարգելի պատճառներով. 2. Միքայէլ Սահակեան յարգելի պատճառով 2 ժամ։ 3. Արշալոյս Մխիթարեան յարգելի պատճառ 1/2 ժամ։ անյարգելի 1 ժամ. 4. Գրիգոր Խալաթեան յարգելի պատճառով 8 ժամ 5. Բագրատ Սուքիասեան 15 ժամ 30 ր. յարգելի պատճառով։ Օրիորդաց դպրոցում բացակայել են մօտ 110 դաս ըստ գրութեան փոխանորդի Գանձակի։ Իսկ ինչ վերաբերում է ամիսներով բացակայելուն քննական գործից այդպիսի բան չի երևում։ Թերևս բոլոր բացակայած դասերը մի ուսուցչի համար մի ամիս հաշուի, սակայն այդ էլ չկայ։ Թեմական տեսչի № 231 գրութիւնից երևում է, որ նա այն էլ զատական և

ջրօրհնեաց տօներին թոյլատրել է ուսուցիչներին 3—10 օր և ոչ աւելի բացակայել դպրոցներից իր թեմում առ հասարակ և այն էլ իր նախընթաց թոյլտուութեամբ։

13· $18^{91}/_{92}$ ուս· տարեշրջանի ուսուցչական խումբը մեղադրւում էր, որ դասեր են թողել ներկայացումների համար, Օրիորդաց ուսումնարանի իրեղէնները գործ են ածել, փչացրել և · · · · յօգուտ իրենց գրպանի։ Թեմական վերատեսչի յիշեալ գրութիւնից երևում է, որ ներկայացումների համար ոչ մի ժամ չեն կորցրել, հակառակ հոգաբարձութեան «ամբողջ ամիս դասերից զրկւում · · ·»ի։ Իսկ բարեշնորհ փոխանորդի քննութիւնից՝ որ ներկայացումը յօգուտ ուսուցչաց գրպանի չէ եղել, այլ եկամուտը ծախսել են «մասամբ պատրաստութեան · · · հանդերձից և մասամբ գրեանց և լրագրոց · · ·», որից զգեստները 40 բուբլու արժողութեամբ իբրև դպրոցի սեփականութիւն գտնւում է աւագ ուսուցիչ Մխիթարեան Արշալոյսի հսկողութեան տակ· իսկ «ի դպրոցական իրեղինաց չեն գործադրեալ և ոչինչ, բացի 5 – 6ր· արժողութեամբ կտորեղինաց» այն էլ $18^{90}/_{91}$ թ· ուսուցչաց խմբի տուած մանկական երեկոյթի արդիւնքով առնուած։

14· Ցանձնաժողովս ի նկատ առնելով հոգաբարձութեան բողոքի այն կէտը որ քննութիւններին իրեն չեն հրաւիրած ներկայ գտնուելու, գտաւ որ կանոնագրութեան 61 յօդուածի համաձայն հոգաբարձուները անշուշտ պիտի հրաւիրուին ներկայ գտնուելու քննութիւններին։

15· Երեցփոխան Մկրտիչ Նաբաթեանի դէմ բողոքում է հոգաբարձութիւնը իբրև պատճառ այն ապօրինութեան որոնք առաջ բերուեցան։ Գործի քննութիւնից երևաց, որ հոգաբարձուներ— Նէրսէս Տէր Ներսիսեանց և Համասփիւռեան հրաժարուել են ոչ զզուած Նաբաթեանի գործունէութիւնից, այլ իրենց սեփական գործերի պատճառով։ Քննական գործերից նրա պարտաղանց լինելը չի ապացուցւում, այլ դրա հակառակ իր պաշտօնը նա կատարում է բարեխղճութեամբ։ Չի ապացուցւում հոգաբարձութեան բողոքի այն կէտը որ վերաբերում է նրա բացակայութեան ժամանակ իր եղբօրից փող ստանալուն, որովհետև հոգա-

բարձութեան գրութիւնները ցոյց են տալիս՝ որ իր 1891 թուականի Յունիսի 11-ի գրութեան համաձայն Նաբաթեանի եղբայրը նոյն ամսի 12-ին վճարում է պահանջեալ գումարը։

17. Երեցփոխանը ամբաստանւում է մօտաւորապէս 3000 ր. գաղելում։ Հոգաբարձութիւնը երկու անգամ առանձին գրութեամբ խնդրում է նրանից այդ 3000 ր. մասին տալ տեղեկութիւն՝ որ իբրև երկու տարուայ ընթացքում ննջեցելոց կտակներից և այլ նուէրներից է գոյացել։ Գանձակի փոխանորդի քննութիւնը ցոյց է տալիս որ «3000 ր. ոչ թէ եղեալ է յընթացս երկուց ամաց՝ որպէս գրէ ի բողոքագրի իւրում հոգաբարձութիւն՝ այլ յընթացս գուցէ աւելի քան եօթն ամի որպէս երևի ի ցուցակէ Հոգևոր Կառավարութեան գտանելոյ առաջի արարելոց ի հոգաբարձութենէ. որպիսի գումարք յիւրումն ժամանակի ընդ անձեռնմխելի մայր գումարոյն եկեղեցւոյ տուեալ են տօկոսեօք՝ է որ մասնաւոր անձանց՝ է որ առաքեալեն ի բանկն. տօկոսից որոց խաւն ընդ միւսոց դպրոցն ստանայ ըստ տարեկան նախահաշուի . . .»։

Հոգաբարձութիւնը ի 1890 թ. Նոյեմբ. 23-ի № 22 և նախագահի 1892 թ. Մայիսի 26-ի № 35՝ գրութիւնների հակառակ՝ Ամենապատիւ Տէր Տեղակալին ուղարկած բողոքագրի մէջ ինչպէս վերևն յիշուեցաւ. ասում է որ 3000 ր. գումարի համար Նաբաթեանը լռում է հաշիւ չի տալիս չնայելով որ ինքը երկու անգամ դրա մասին նրան հարցումն է արել. (№ 22 և № 35 գրութիւնքը) մինչդեռ իր յիշեալ երկու գրութիւններից առ Նաբաթեանն՝ երևում է՝ որ նրանից պահանջում է տիկին Վ.էքիլեանից յուլիսի 5 ի 1890 թ. ստացուած 2000 ր. հաշիւը՝ թէ ո՞ր բանկն է գտնւում՝ և քանի՞ տոկոսով։ Այդ 2000 ր. մասին Գանձակի փոխանորդի քննութիւնը ցոյց է տալիս՝ որ հոգաբարձութիւնը և նրա նախագահը կամենային իմանալ տեղեկութիւն՝ կարէին «քաղել . . . որպէս ի հաշուէմատեանէ եկեղեցւոյ՝ նոյնպէս և ի հաշուետետրակէ նոյն եկեղեցւոյ տպագրելոց ի 1891 ամի վասն 1890 և 1891 ամաց՝ որ՝ 2000 ր. ստացեալն ի Վ.էքիլեան-

ցէ միաւորեալ ընդ եկեղեցական դրամագլխոյն առաքեալ է յարքունի բանկն Բագուայ . . .»։

17· Հոգաբարձութիւնը որպէս զի մի կերպ արդարանայ, որ առանց գանձապահ հոգաբարձուի ներկայութեան ժողովներ է գումարում և քննում խնդիրներ երբ նրա ներկայութիւնը անհրաժեշտ է, բողոքում է թէ Նաբաթեանը թերևս 3000 ր· մասին հաշիւ չտալու համար չի մասնակցում հոգաբարձական գործերին։

Հոգաբարձութեան ներկայացրած վեց հրաւիրագրերի պատճէններից հնգի վրայ Նաբաթկանի անուան դէմը գրուած է չէստորագրել չէ եկել· իսկ մէկի վրայ նրա անուան դէմը ոչինչ չէ գրուած· որոնք իսկապէս նրա բացակայելու մասին ապացոյցներ չեն։ Հոգաբարձու Նաբաթեանը ինչպէս երևում է բացակայ է եղել ժողովներից երբ խնդիրներ է եղել իր թեմական վերատեսչի և աւագ ուսուցիչների դէմ։

18· Հոգաբարձութեան թեմական տեսչի դէմ բողոքի մի կէտն էլ կազմում է ուսուցիչ Աբուլեանի խնդիրը, որը սակայն ցանձնաժողովս կարօտ է գտնում բացատրութիւնների։

19· Հոգաբարձութեան նախագահը բողոքում է, որ աւագ ուսուցիչների գրութեան ոճը շատ գռեհիկ է և անպատշաճ· մինչդեռ իւր առ թեմական վերատեսուչն ուղղած գրութեանց ոճը միանգամայն անսպասելի է և պաշտօնական գրութեան համար միանգամայն աններելի· Նա գրում է «. . . Ձեր գրութիւնը վերտ· 4-ից № 989, դարձեալ ուղղած իմ հասցէին, որ ոչ սակաւ անպատուաբեր ոճ ունի, որը սպասելի չէր նրա հեղինակից, որը համբաւ ունի գրական աշխարհում» . . գրում էք թէ ինձանից յանդիմանութիւն այդ մասին չէք ստացել», որպէս թէ իրաւունք էլ ունէիք, և թոյլ էք տալիս Ձեզ ասելու թէ «ես իբրև թեմական տեսուչ իմ կողմից արգելում եմ Ձեզ» յ՚ետ որոյ մի ամբողջ թերթի երես մրոտելով՝ խրատում էք աւետարանի ներողամտութիւնը ինձ յիշեցնելով և Ձեզ համար բաժին չթողնելով . . .» դարձեալ «. . . անաչառ տիրողութիւններս թող չվիրաւորեն Ձեզ բարեկրօն Հայր, միայն խնդրում են որ այսուհետև

համեստ լինել մեր գրութեանց մէջ... Մենք երկուսս էլ մի նպատակի սպասաւորներ ենք (դուք փողով ես անփող)... Ես եմ ձեզ ստորագրեալ և ոչ էլ դուք»։ (Ապրիլ 18· 1892 թ· № 29 Հոգաբարձութեան նախագահի գրութիւնը թեմական վերատեսչին·)։

Ամբողջ գործից երևումէ, որ Հոգաբարձութեան սուր յարաբերութիւնը դէպի աւագ ուսուցիչները, թեմական վերատեսուչը և գանձապահ Հոգաբարձուն և ամբողջ գործը իւր մէջ պարունակող խնդիրներով, ծագել է ոչ թէ դպրոցը բարեկարգելու ձգտումներից, այլ անձնական հաշիւներից, որոց մէջ ամենագլխաւոր դերը կատարել է Հոգաբարձութեան նախագահը ձգտելով վրէժ լուծելու նոյն իսկ ի վնաս հիմնարկութեան այն ամեն անձինքներից, որոնք չեն համակերպել նորա ապօրինի պահանջներին և մանաւոր շահերին։

Ցանձնաժողովս որոշեց· 1· Որովհետև յիշեալ Հոգաբարձութեան նախագահն է արմատ և պատճառ բոլոր խռովութիւնների, ուստի դիմել առ Ամենապատիւ Տէր Տեղակալն և խնդրել արձակել Գանձակի ս· Յովհաննէս եկեղեցու տղայոց և օրիորդաց դպրոցների Հոգաբարձութեան նախագահ Գրիգոր քահանայ Թումանեանին իր պաշտօնից, իբրև դպրոցական գործի կանոնաւոր առաջ գնալուն խանգարողի և առ ժամանակ նրա պաշտօնը յանձնել Գանձակի առաջնորդական փոխանորդին, որ ըստ պաշտօնի ներկայացուցիչն է դպրոցների անմիջական խնամատարի—թեմական առաջնորդի, մինչև նոր Հոգաբարձական ընտրութիւնների հնարաւոր լինելը։

2· Աբուլեանի խնդրի, ինչպէս և կանոնագրութեան 15· յօդ· ը· պարբերութեան դէմ եղած և մի քանի այլ կարգադրութիւնների մասին պահանջել բացատրութիւններ թեմական վերատեսչից։

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ պ· Լէոյի հեղինակութիւններից հետևեալ գրքերը մի մի օրինակ· «Վահան Մամիկոնեան», «Խմ Ցիշատակարանը», «Դաւիթ և Մհեր», «Սպանուած Հայը», «Թաթախման գիշեր» և «Վերջին վերքեր»։